

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԵՂԵՌՆԻ 70-ԱՄՅԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԱՄՆ-Ի ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄՈՒՄ

Մեկ տեղեկացնում են, որ Եղեռնի 70-ամյակի առիթով 1985 թվականի ապրիլի 22-ին Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արևմտյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը մեծ շքախմբով այցելել է Կալիֆոռնիայի հայապգի նահանգապետ տիար Ճորճ Տեռքմեճյանին: 70 հոգիանոց շքախումբը բաղկացած է եղել Կալիֆոռնիայի վանական քաղաքների կղերական դասից, թեմական ներկայացուցիչներից, կրթական, մշակութային և բարեսիրական հաստատությունների գործիչներից և մամուլի ներկայացուցիչներից: Ներկա էին նաև Թեմական խորհրդի ատենապետ տիար Ռաբբրթ Պարսամ և Պատգամավորական ժողովի ատենապետ տիար Ռիչըրդ Ամիրյան:

Մեծապատիվ նահանգապետը Հայաստանյայց Եկեղեցու պատվիրակությունը ընդունեց առավոտյան ժամը 10-ին, նահանգապետարանի շքեղ հյուրասրահի մեջ: Տիար Տեռքմեճյանը բարի գալուստ մաղթեց Սրբազան հորը և նրա շքախմբի անդամներին: Ապա անդրադարձավ 1915 թվականի մեծ արհավիրքին և դատապարտեց հայ ժողովրդի դեմ իրագործված ցեղասպանությունը, պախարակեց բոլոր նրանց, ովքեր ուզում են ծածկել սարսափելի ոճիրը՝ վճռականորեն հաստատելով, թե հայ ժողովուրդը անպայմանորեն պետք է հետապնդի իր դատը և ստանա իր արդար իրավունքը:

Գերշ. Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը արևմտյան թեմի և իր շքախմբի անդամների անունից շնորհակալություն հայտնեց տիար նահանգապետին՝ սիրալիր ընդունելության համար, և դրվատեց նրա ցուցաբերած խիզախ ոգին և վճռակամությունը: Առ ի երախտագիտություն՝ Սրբազան հայրը նահանգապետին նվիրեց «Էջմիածնի գանձեր» գեղատիպ գիրքը:

Շնորհակալական խոսքով հանդես եկան նաև տիարք Ռիչըրդ Ամիրյան և փաստաբան Վարնըմ Փոլ:

Ապա առաջնորդ Սրբազանը հրավիրվեց Կալիֆոռնիայի նահանգի Խորհրդարան ու Ծերակուտարան, որտեղ նրա Եղեռնի 70-ամյակը ոգեկոչող կուռ և տպավորիչ ճառը արժանացավ հոտնկայս ծափահարության:

Կեսօրին, ի պատիվ տիար Տեռքմեճյանի, պատվո ճաշ տրվեց, որին մասնակցեցին նաև պետական այլ ներկայացուցիչներ:

Հանդիսավոր ճաշկերույթին շնորհակալական ճառով հանդես եկավ թեմական խորհրդի ատենապետ տիար Ռաբբրթ Պարսամ: Ելույթ ունեցան նաև պետական ներկայացուցիչներ, որոնք Սրբազան հորը հանձնեցին ցեղասպանության յոթանասունամյակը ոգեկոչող հայտարարությունը: Ապա նահանգապետ Տեռքմեճյանը բարձր գնահատեց առաջնորդ գերշ. Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանի գործունեությունն ու ջանքերը հայկական գաղութի կազմակերպման և ազգային դիմագծի ստեղծման համար: Տիար նահանգապետը խոստացավ, որ այսուհետև նույնպես կշարունակի թիկունք կանգնել Հայաստանյայց Եկեղեցուն, մանավանդ արևմտյան թեմին:

Տ. ՎԱՉԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ ԵՎ ՏԻՍՐ ՃՈՐՃ ՏԵՌՔՄԵՃՅԱՆԸ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆՑ ՍՐԱՀՈՒՄ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ (ԿԱԼԻՖՈՐՆԻԱ) Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԱՄԵՆՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ